

ՎՊՀ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ

ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2018թ

ՎՊՀ-ին տրամադրվող ասպիրանտուրայի տեղերի սակավության պատճառով գիտական կադրերի պատրաստումը հիմնականում իրականացվում է հայցորդության միջոցով: ՎՊՀ-ում հայցորդության հիմունքներով գիտական կադրերի պատրաստումը կանոնակարգվում է ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով, «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով:

2015-16, 16-17 ուս. տարիներում որպես հայցորդ ձևակերպված ուսանողները 2017-18 ուս. տարում շարունակել են իրենց ուսուցումը ըստ հաստատված ուսումնական պլանի: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում համապատասխան ամբիոններում անցկացվել է նրանց ատեստավորումը, որի արդյունքներով նրանք տեղափոխվել են հաջորդ կուրս: Տարբեր գիտական ամսագրերում տպագրվել են նրանց գիտական հոդվածները: 2015-16 ուս.տարվա հայցորդներից երեքը՝ Ս.Բարսեղյանը, Ս.Մուրադյանը և Թ.Տավարաձյանը 2018թ մայիս-հունիս ամիսներին հանձնել են մասնագիտական որակավորման քննությունները, իսկ Գ.Էմինյանը հանձնել է այն 2018թ նոյեմբերին:

2016-17 ուս.տարվանից ձևակերպված 7 հայցորդներից, որոնք անցել էին 2-րդ ուս.տարվա ատեստավորումը, ներկայումս ուսումը շարունակում են 4-ը (երեքը գտնվում են ակադեմիական արձակուրդում երեխա ունենալու կապակցությամբ):

2017-18 ուս.տարվա հայցորդության համար ներկայացվել էր մեկ դիմում, որը քննարկվել էր գրականության ամբիոնում, հաստատվել էր գիտական ատենախոսության թեման, նշանակվել էր գիտական ղեկավար, սակայն հայցորդը անձնական պատճառներով հրաժարվեց հայցորդությունից:

2018-19 ուս.տարվանից հայցորդության հիմունքներով ասպիրանտուրա են ընդունվել 2 անձ, երկուսն էլ ձևակերպվել են պատմության ամբիոնում:

Հայցորդության դիմումների նվազման հիմնական պատճառներից մեկը կարելի է համարել քննարկման փուլում գտնվող «ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության մասին» նոր օրենքով նախատեսվող հայցորդության ինստիտուտի վերացումը:

Համաձայն նախնական տարբերակի՝ գիտական կադրերի պատրաստման միակ ուղին ասպիրանտուրան (դոկտորանտուրան) է:

Սակայն վերջին տասը տարիների ընթացքում մեր համալսարանին ՀՀ կառավարության կողմից հասկացվել է ասպիրանտուրայի միայն մեկ անվճար տեղ (հեռակա ուսուցմամբ)՝ 2016թ-ին, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությունից, որը սակայն մնաց թափուր՝ դիմորդի՝ զինվորական ծառայության մեջ գտնվելու պատճառով:

ՎՊՀ-ում ասպիրանտական կրթության զարգացմանը, բացի տնտեսական պատճառներից, մեծապես խոչընդոտում է ասպիրանտուրայի ընդունելության պարտադիր նախապայմանի՝ TOEFLE (կամ IELTS, TCF, օտDAF) ծրագրով օտար լեզուների իմացության հավաստագրի առկայության անհրաժեշտությունը: Համապատասխան դասընթացներին մասնակցելու և քննություն հանձնելու համար ցանկացողները ստիպված են շաբաթական մի քանի անգամ հասնել մայրաքաղաք, ինչն անհնարին է աշխատող կամ ուսանող ապագա դիմորդների համար:

2018թ-ի ասպիրանտուրայի ենթադրյալ դիմորդների համար նախարարության կողմից տրամադրվել էր երկու անվճար տեղ՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանում՝ TOEFLE, իսկ ԵՊՀ-ում կամ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում՝ ինֆորմատիկայի դասընթացներին մասնակցելու և քննություն հանձնելու նպատակով: Կնքվեցին համապատասխան պայմանագրեր Համալսարանի երկու երիտասարդ աշխատակիցների համար, բայց դասընթացներին մասնակցեց միայն մեկը, որը հաջողությամբ հանձնեց քննությունները և ստացավ համապատասխան հավաստագրերը:

2018թ հոկտեմբերին մասնակցել եմ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Որակի ապահովումը գիտական հետազոտություններում» միջազգային սեմինարի աշխատանքներին: Հաշվետու տարում շարունակել եմ համակարգել հայցորդների ուսումնական աշխատանքը, անհրաժեշտության դեպքում կարգավորել ծագած խնդիրները:

Ասպիրանտուրայի բաժնի վարիչ՝

Ս.Առուստամյան

15.12.2018